5640

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան
«16» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 141-25

Նախաձեռնող՝ *«Եռանկյուն պրոջեքտ» ՍՊԸ*
ք. Եղվարդ, Պ. Սևակ 1/25

Գործունեությունը՝ *Անի համայնքի Շիրակավան բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցում*
Շիրակի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 141-25

«16» Մայիսի 2025 թ.

Անի համայնքի Շիրակավան բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Եռանկյուն պրոջեքտ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, Անի համայնք, Շիրակավան բնակավայր

Ներածական մաս. Կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում «Եռանկյուն պրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է միջնակարգ դպրոցի կառուցում Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ է: Դպրոցի կառուցապատման համար նախատեսված հողամասը զբաղեցնում է 1.48 հա մակերես: Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Դիտարկվող տարածքը գտնվում է Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի 4-րդ փողոցի 33/2 հողամասում, Շիրակավան բնակավայրի գերեզմանատնից գտնվում է 850 մ հեռավորության վրա, իսկ Սուրբ Աստվածամայր եկեղեցուց՝ 110 մ: Բնակավայրի կողքով է անցնում Н75 հանրապետական նշանակության ճանապարհը: Դպրոցի կառուցման համար հատկացված տարածքն իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք, բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատմամշակութային հուշարձանները: Նոր դպրոցական համալիրը նախատեսված է 288 աշակերտի համար և

բաղկացած է չորս (4) մասնաշենքերից, որոնք իրարից առանձնացված են հակասեյսմիկ կոնստրուկտիվ կարերով: Դպրոցի կոնստրուկտիվ համակարգը լուծված է միաձույլ ե/բ հիմնակմախքով, միաձույլ ծածկերով և դիաֆրագմա ծառայող միաձույլ երկաթբետոնյա արտաքին և ներքին պատերով: Արտաքին պատերը և վերնածածկը ջերմամեկուսացվելու են, հիմքերը ժապավենային են, տանիքները՝ լանջավոր: Շենքերի մուտքերի մոտ նախատեսված են թեքուղիներ: Նախագծով նախատեսված են հաշմանդամություն ունեցող անձանց համար սանհանգույցներ, ինչպես նաև վերելակ, ներքին ջեռուցման և օդափոխության համակարգեր: Շինության ջեռուցումն ապահովվելու է կառուցվող կաթսայատան միջոցով: Կառուցվելու են նոր կաթսայատուն ու ինժեներական ցանցեր, տանիքում տեղադրվելու են արևային վահանակներ՝ 232 հատ 550 վտ-127.6 կվտ: Իրականացվելու է դպրոցի տարածքի ցանկապատում և բարեկարգում: Դպրոցն ապահովված է լինելու հաշմանդամություն ունեցող անձանց ուսման հիմնական պահանջներին: Շենքի մուտքերի մոտ նախատեսված են թեքուղիներ, իսկ ներսում՝ հաշմանդամների համար վերելակ և սանհանգույց: Դպրոցի նախագծային լուծումներում ներառվել են դպրոցի տարրական, միջին և ավագ դպրոցների հոսքերը, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, վարչական մասնաշենքերը, նոր կաթսայատունը, բացօթյա մարզահրապարակը և խաղահրապարակը: Տարածքն ունենալու է մեկ գլխավոր մուտք: Շինությունը կազմված է լինելու չորս մասնաշենքերից /Ա,Բ,Գ,Դ/, որոնցից երկու կենտրոնական մասնաշենքերը լինելու են նկուղային հարկով: Կառուցվելու է կաթսայատուն, սեպտիկ հոր, ֆուտբոլի դաշտ և մարզահրապարակ: Բոլոր մասնաշենքերի տանիքները լինելու են երկթեք, ծածկերը՝ միաձույլ ե/բետոն, հիմքերը՝ ժապավենային: Դպրոցի սպորտային հրապարակները լինելու են ռետինե ծածկույթով:

Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային- ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով:

Դպրոցի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- հողամասի ընդհանուր մակերես՝ 1.48 հա,
- կառուցապատման մակերես՝ 3080.6 քմ,
- կանաչապատման մակերես՝ 5765.56 քմ:

Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են՝ հիմք ընդունելով Կառավարության 12.04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին

համապատասխան՝ ներառելով ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը: Էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները:

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ: Դպրոցի շենքը կառուցվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում իրականացվելու են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝

- շինարարության ընթացքում՝ հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապահի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, կուտակված նյութերը պահվելու են հնարավորինս ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,
- շինարարության ընթացքում սահմանափակվելու է մեքենաների արագությունը՝ փոշու քանակը նվազեցնելու նպատակով,
- բացառվելու է անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացնվելու են օրվա ցերեկային ժամերին, բոլոր մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Բարեկարգումը կատարվելու է սալիկներով, սալվածքների, թեքահարթակներ, եզրաքարերի տեղադրմամբ: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են համաձայն Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

Տնկվելու են նոր ծառեր՝ 38 հատ: Կանաչապատման համար առավել հարմար տեսակներն են սոճին (12), թխկին (20) և ուռենին (4): Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ համաձայն համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ազդակիր համայնքում (Շիրակավան բնակավայր) անցկացվել է հանրային լսում, որի ընթացքում բնակիչները կողմ են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ նշելով դպրոցի կառուցման կարևորությունն իրենց համար:

Նախաձեռնողը պարտավորվել է շինարարության ընթացքում իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող բացասական ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող լրացուցիչ միջոցառումներ: Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ: Հողային ռեսուրսների պահպանության նպատակով հողի բերրի շերտի հետ կապված աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել ընկերության կողմից հաշվետվությունը լրամշակելիս: Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Նոր դպրոցի կառուցումը հնարավորություն կտա աշակերտների ուսուցումը կազմակերպել ավելի որակյալ, անվտանգ՝ բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, ժամանակակից չափորոշիչներով հագեցած շենքում:

Փորձաքննական պահանջներ

Կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինաղբի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով և այլն):

2. Շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում՝ Անի համայնքի հետ համաձայնեցված կանաչապատման բարեկարգման նախագծի համաձայն՝ տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ և խնամքով և ապահովել նախագծման թույլտվությունում և հաշվետվությունում ամրագրված կանաչապատման մակերեսը:

3. Շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով (բացառել թափոնների և շինարարական աղբի կուտակումները հարակից տարածքներում):

4. Ապահովել հաշվետվությամբ ներկայացված բոլոր բնապահպանական և մշտադիտարկումների միջոցառումների իրականացումը (օդի որակ, հողային և ջրային

ռեսուրսների պահպանություն, աղմուկի և թրթռումների մակարդակ, շահագործվող տեխնիկայի պատշաճ տեխնիկական վիճակ և այլն):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Եռանկյուն պրոջեքտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան